ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՄՈՒՐԱՏ ՀԱՄՐԱԹԵԱՆ

Հայաստանի վաղ միջնադարի եւ զարգացած աւատատիրական դարաշրջանի շինարարական տեխնիկան եւ շինարարական գործի կազմակերպումը եղել են հայ ճարտարապետութեան պատմութեան մասնագէտների ուսումնասիրութեան առարկայ։ Թ. Թորամանեանի, Վ. Ցարուբիւնեանի, Հ. Ղալփախչեանի, Ստ. Մնացականեանի, Ս. Բարխուդարեանի այդ խնդրին նուիրուած աշխատանքներում լուսաբանուած են Դ.—ԺԴ. դարերի յուշարձանների տեխնիկական առանձնայատկութիւնները (շինանիւթերը, կառուցման տեխնիկան, կոնստրուկցիաները), եւ յատկապէս, շինարարական գործի կազմակերպումը։ Այդ տեսակէտից ուշ միջնադարի Հայաստանի շինարարական արուեստը, ինչպէս հարկն է, չի ուսումնասիրուած, եւ այդ այն դէպքում, երբ ԺԵ.—ԺԸ. դարերի խնդրոյ առարկայ հարցի վերաբերեալ մեծաքանակ փաստական նիւթ է պարունակւում յուշարձանների պատերին եղած արձանագրութիւններում, պատմիչների մօտ, ձեռագրերի յիշատակարաններում։ Այս առումով հայ ճարտարապետութեան ուշ միջնադարի փուլը շահաւէտ տարբերւում է նախորդ փուլերից, որոնց շինարարական գործի կազմակերպման ողջ ընթացքը այսօր կարելի է վերականգնել դեռ զգալի մօտաւորութեամբ։

Ուշ միջնադարում եկեղեցական նոր շէնք կառուցելու համար պարտադիր էր իշխանութիւնների թոյլտուութիւնը։ Արեւելեան Հայաստանում այդ հարցով կաթողիկոսները զիմում էին Պարսից շահին կամ նրա տեղապահին, ընդ որում՝ յատուկ թոյլատրութիւն էր պահանջւում ոչ միայն եկեղեցի՝ այլեւ զանգակատուն կառուցելու համար։ Այսպէս, օրինակ, Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան կառուցման համար Փիլիպոս Կաթողիկոսը զիմել էր Երեւանի Մահմատղուլի խանին «կաչառօք եւ բազում խնդրանօք». բայց մերժում էր ստացել՝։ Պաշտամունքային շինութիւնների կառուցման թոյլտուութիւնը Հայաստանի կառավարիչների, ինչպէս

նաեւ Պարսից արքունիքի համար եկամտի լրացուցիչ աղբիւր էր։ Փիլիպոսին յաջորդած Յակոբ Կաթողիկոսը զանգակատան թոյլտուութիւնը Երեւանի նոր սարդար Նաջաֆխուլի խանից ստացաւ միայն «բազում ոսկի եւ արծաթ տալով նմա եւ նորին իշխանացն»[2]։

Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ Վանքի եկեղեցու կառուցման համար դիմեցին Շահաբաս Առաջինին, ընդ որում՝ թոյլտուութիւնը գրաւոր էր, կնքուած եւ ստորագրուած արքունի պաշտօնեաների կողմից[3]։ Արքայական թոյլտուութիւնը զուգակցւում էր տուեալ գաւառի պարսիկ իշխանաւորի բանաւոր համաձայնութեամբ. օրինակ, Ագուլիսի Ս. Յովհաննէս Եկեղեցին 1664 թուին սկսեցին շինել «թագաւորի ըռաղամով, Միրզա Իբրահիմի խօսքով, զերայ Ագուլիս նորայ գաֆտումն էր»[4]։

Ուշ միջնադարում եկեղեցիների կառուցումը ֆինանսաւորուել է տարբեր աղբիւրներից։ ԺԵ.—ԺԸ. դարերի վանքային համալիրներ, խոշոր եկեղեցիներ շինուեցին էջմիածնի, Գանձասարի, Աղթամարի կաթողիկոսութիւնների միջոցներով։ Շինարարական մեծածաւալ աշխատանքներ իրականացրեցին, մասնաւորապէս, էջմիածնի Մովսէս Տաթեւացի, Փիլիպոս Աղբակեցի, Նահապետ Եղեսացի եւ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսները։

Կատարած աշխատանքների ծաւալով եւ շինութիւնների քանակով կաթողիկոսութիւններից յետոյ գալիս են խոշոր վանքերը, որոնք լինելով հարուստ աւատատիրական տնտեսութիւններ՝ իրենց միջոցներով կառուցում էին ոչ միայն վանքի նոր եկեղեցիները եւ աշխարհիկ շէնքերը՝ այլեւ մօտակայ «անապատների» ու բնակավայրերի եկեղեցիները։ Այսպէս, օրինակ, Տաթեւի Վանքը ԺԷ.—ԺԸ. դարերին կառուցեց միջնադարեան յուշարձանախմբի շուրջը աշխարհիկ շէնքերի մի հսկայական համալիր, մօտակայ Մեծ Անապատում բնակելի խցերի խումբ, Հալիձորի Հարանց Անապատում՝ պարիսպ, Տաթեւ գիւղում՝ Ս. Մինաս Եկեղեցին[5]։

Ուշ միջնադարում հանդէս եկաւ մեկենասների մի նոր խաւ։ ԵԹԷ ԺԲ.— ԺԴ. դարերում խոշոր կառոյցներն իրականացւում էին իշխանական տների միջոցներով՝ ապա նրանց վերացումից յետոյ այդ գործը ստանձնեց հայ վաճառականութիւնը։ Խոջայական կապիտալը ԺԶ.—ԺԸ. դարերում մեծ դեր խաղաց ծաւալուն շինարարական աշխատանքների ֆինանսաւորման գործում, յատկապէս Արեւելեան Հայաստանում։ Զուղայի, Ագուլիսի վաճառականների միջոցներով նոր եկեղեցիներ եւ կրօնական համալիրներ կառուցուեցին ոչ միայն իրենց հայրենի գաւառում՝ Գողթնում, այլեւ նրա սահմաններից դուրս (Խոր Վիրապ, Շատին Վանք, Շնհէրի Կուսանաց Անապատ, Լոր գիւղի եկեղեցի եւ այլն)։ Էջմիածնի զանգակատունը շինուել է պոլսեցի պարոն Անտոն Զելեպիի, իսկ Երեւանի Զօրաւոր Եկեղեցին՝ Խոջա Փանոսի ծախսով։ Հայ վաճառականութիւնը շահագրգռուած էր երկրում անխափան գործող հաղորդակցութեան կապերով եւ

նիւթապէս ապահովում էր կարեւոր ճանապարհների վրայ կամուրջների շինարարութիւնը։ Մեծահարուստների գումարներով ԺԴ. դարում խոշոր կամուրջներ կառուցուեցին Աշտարակում՝ երեւանցի մահտեսի Խոջա Գրիգորի, իսկ Երեւանում՝ քանաքեռցի Խոջա Փլաւի միջոցներով։

Սակայն խոշոր շէնքերի եւ եկեղեցիների կառուցումը լրիւ իր միջոցներով իրականացնելը կարող էին թոյլ տալ միայն եզակի մեծահարուստները։ Այս պատճառով ուշ միջնադարում երեւան եկաւ մեծածաւալ շինարարութեան ֆինանսաւորման հետաքրքիր եւ նոր ձեւ՝ առանձին անհատների կամ ընտանիքների ծախսով կառուցւում էին կամ նորոգւում քաղաքացիական եւ եկեղեցական շէնքերի առանձին մասերը միայն։ ԺԸ. դարում Էջմիածնի Վանքի պարիսպների հիւսիսային բուրգերից մէկը կառուցուել է ղափանցի մահտեսի Գրիգորի, երկրորդը՝ սառաֆ մահտեսի Զաքարիայի, երրորդը՝ Տէր Կարապետի միջոցներով, իսկ պարսպի «եօթ գազ» երկարութեամբ հատուածը՝ ագուլիսցի Յովսէփի գումարով (այս բոլորը արձանագրութիւններով նշւում էր կառոյցի համապատասխան մասի վրայ)[6]։ Մուղնու Ս. Գէորգ Եկեղեցու հարաւ–արեւելեան սիւնը եւ նրա վրայ հանգչող արեւմտեան կամարը շինուել են պարոն Վարդանի եւ նրա եղբօր՝ Դաւիթ Վարդապետի «խարճով»[7]։ Տարբեր մեկենասներ են կառուցել Քանաքեռի Ս. Աստուածածին եռանաւ բազիլիկի առանձին մոյթերը։

Ընդունուած էր նաեւ հանգանակութիւնը, ընդ որում՝ վերջինս կատարւում էր ոչ միայն նոյն կամ մօտակայ բնակավայրերում՝ այլեւ հեռաւոր գաւառներում, որոշ եկեղեցական շէնքերի համար ընդունելով նոյնիսկ համահայկական բնոյթ։ Օրինակ, Մուղնու Ս. Գէորգ Եկեղեցու կառուցման համար վանքի առաջնորդ Յովհաննէս Վարդապետը 1669 թուին. «... եկեալ էր որ Ագուլիս, սուրբ Գէորգայ մասն բերել վասն ժողով անելու, քանզի Մուղնու սուրբ Գէորգայ անուան եկեղեցին այս Բ(2) տարի այ, որ շինում է։ Պարտք ունէր. եկաւ Ագուլիս, Լ(30) թուման կիտեց, գնաց Ուրդուվար»[8]։

Ուշ միջնադարում մեծ թուով ծխական եկեղեցիներ կառուցուեցին տուեալ համայնքի, գիւղի բնակչութեան ընդհանուր միջոցներով, որը առանձին նշւում էր շինարարական արձանագրութիւնում. օրինակ՝ «Մենք Փիփեցոյ ժողովուրդս միարան շինեցաք», «Արդեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 ամբ», «Արդեամբ Խաչակապաց ժողովրդոց շինեցաւ...»[9]։

Շինարարական գործի կազմակերպման համար նախաձեռնողները՝ կաթողիկոսները, վանքերի առաջնորդները, գիւղի տանուտէրերը, կամ ծախսը հոգացող մեկենասները նշանակում էին «վերակացու» ընդ որում ոչ թէ քարգործ վարպետներից՝ այլ համայնքի հեղինակաւոր մարդկանցից կամ վանքի միաբանութիւնից։ Օրինակ, Փիլիպոս Կաթողիկոսը էջ-

միածնի Ս. Գայիանէի Տաճարի համար «վերակացու եւ գործավար» կարգեց Յովհաննէս աբեղային՝ «այր արդիւնաւոր եւ գործօնեայ»[10]։ Իսկ Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցող, մեկենաս Շմաւոն Ագուլեցին «վերակացու դրեց... եկեղեցին շինելու երեւանցի Յակոբջանի որդի Ոհան–բարէն»[11]։ Երեւանի Զօրաւոր Ս. Աստուածածին Եկեղեցու վերակացուն Դաւիթն էր, իսկ 1793 թուի վերանորոգման ժամանակ՝ պարոն Գրիգորը, «սոյն գործառնութեան ժիր վերակացուն»[12]։

Որոշ դէպքերում շինարարութիւնը ղեկավարում էին մէկից աւելի վերակացու՝ Ագուլիսի Ս. Քրիստափոր Եկեղեցին 1671 թուին կառուցելիս՝ «Վերին թաղի խոջայ Գուլնազարն, Քիչիբէկն, Մալխասն վերակացու եղեն, ժողովրդեան փողով շինեցին»[13]։

Վերակացուները պատասխանատու էին շինարարութեան ողջ ընթացքի, միջոցների ճիշդ ծախսման համար եւ հրաւիրում էին ճարտարապետի կողմից ղեկավարուող շինարարների խմբերին, որոնք ուշ միջնադարում շրջիկ էին եւ եկեղեցիներ ու աշխարհիկ խոշոր շէնքեր էին կառուցում իրենց հայրենի բնակավայրերից բաւական հեռու։ ԺԷ.–ԺԸ. դարերում Արեւելեան Հայաստանում մեծ հեղինակութիւն էին վայելում Վասպուրականի ճարտարապետները եւ վարպետները, որոնց հրաւիրում էին Արարատ, Սիւնիք, Գողթն՝ կարեւոր շէնքերի կառուցման համար։ Վասպուրականից («Քրդստանից») հրաւիրուած ճարտարապետերը կերտեցին ԺԷ. դարի լաւագոյն յուշարձանները՝ Մուղնու Ս. Գէորգ Եկեղեցին, Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատունը, Շնհէրի, Ագուլիսի եկեղեցիները։

Ուշ միջնադարում ճարտարապետերը հիմնականում կոչւում էին պարսկերէնից փոխանցուած «ուստա» անուանումով, սակաւաթիւ՝ «մէյմար» արաբերէն բառով (յայտնի են Ներքին Վարագավանքը նորոգող Մէյմար Տիրատուրը եւ Երեմերա Վանքի պարիսպը 1663 թուին կառուցող Մէյմար Գրիգորը), եւ հայերէն «վարպետ» կոչումով (պահպանուել են 1447 թուի Ամիթի Եկեղեցին կառուցող վարպետ Նեքամատի եւ ԺԷ. դարում Սիսիանի Դաստակերտ աւանի եկեղեցին շինող Թումա վարպետի անունները)[14]։ Ի սպառ չի օգտագործւում ԺԳ. դարում լայնօրէն տարածուած «վարդպետ» անուանումը, ինչպէս նաեւ «քարգործը» որի փոխարէն կիրառուած է «քարահատ»։ Սահակ Հիզանեցու տապանագրից յայտնի է դառնում նաեւ այդ ժամանակաշրջանի խոշոր ճարտարապետերին տրուող կոչումները՝ նա անուանուած է «մէյմար պետ» եւ «մեծ ուստա», ինչպէս նաեւ նշուած են այդ մասնագիտութեան միւս հոմանիշները՝ «քարահատ» եւ «ճարտար»[15]։ Իսկ «ճարտարապետ» անուանումը հանդիպում է միայն մէկ անգամ՝ 1638 թուի ձեռագրի յիշատակարանում[16]։

Հայաստանում ուշ միջնադարում շէնքերի նախագծման մասին փաստեր չեն պահպանուել, չկան եւ որոշակի տեղեկութիւններ պատմիչների

մօտ եւ յիշատակարաններում։ Միջնադարում տարածուած մանրակերտային նախագծումը աւելի ուշ չի կիրառուել. ԺԵ.–ԺԸ. դարերի եկեղեցիների քարէ սակաւաթիւ մանրակերտները սոսկ ճակտօնազարդ են, շէնքի յօրինուածքի հետ առընչութիւն չունենալով (օրինակ, Երեւանի Զօրաւոր եկեղեցի)։ Սակայն նկատի ունենալով, որ արդէն ԺԶ. դարում շինարարական գծագրեր գոյութիւն են ունեցել Ռուսաստանում եւ Միջին Ասիայում՝ ապա միանգամայն հաւանական է դառնում զարգացած շինարարական արուեստ ունեցող Հայաստանում նոյնպէս նմանօրինակ նախագծման կիրառումը ԺԷ.–ԺԸ. դարերում։ Նրա գոյութեան կողմնակի ապացոյցն է Պարսից շահի հրամանով Արեւելեան Հայաստանում բոլոր եկեղեցիների եւ վանքերի չափագրութիւնը, որը կատարուեց 1664 թուի Յունուարին[17]։

Ուշ միջնադարում ակնյայտ է եկեղեցիների զանգուածային շինարարութեան գործում «տիպար» եւ «պատճէն» կառոյցների գոյութիւնը։ Պատուիրատուն որոշել է եկեղեցու տիպը, իսկ ճարտարապետը տիպարային յօրինուածքի դէպքում, իր վարպետութեան եւ փորձի թոյլատրած սահմաններում ձգտել է անհատականութիւն հաղորդել կառոյցին։ Օրինակ, մօտ հարիւրի հասնող եռանաւ բազիլիկների համար տիպար է ծառայել ժամանակագրական առումով ամենավաղ՝ Հարանց Անապատի եկեղեցին, որը ԺԷ. դարում կրօնական գործիչներ պատրաստեց ողջ Հայաստանի վանքերի ու անապատների համար։ Եռաստիճան զանգակատների տիպարը նոյնպէս առաջին օրինակը հանդիսացող Էջմիածնի Մայր Տաճարի զանգաշտարակն էր։ Որմնախորշերով միանաւ բազիլիկների առաջնեկը՝ Բէխի Անապատի եկեղեցին տասնեակներով կրկնուեց Սիւնիքում։

Ապագայ շէնքի յատակագծային յօրինուածքը նշահարւում էր վաղօրօք նախապատրաստուած շինարարական հրապարակում. այդ մասին որոշակի տեղեկութիւն կայ Էջմիածնի Վանքի համալիրի կառուցման կապակցութեամբ[18]։ Հայաստանում միջնադարում կիրառուող չափի միաւոր «կանգունը» (մօտ 51 սմ.), յետագայում՝ ԺԷ.–ԺԸ. դարերում այլեւս չի օգտագործւում։ Ուշ միջնադարում Հայաստանում շինարարական գործում ընդունուած միաւորը պարսկական գազն էր (112 սմ.)։ Այն կիրառւում էր ինչպէս եկեղեցական՝ այնպէս էլ քաղաքացիական շէնքերի կառուցման ժամանակ եւ ժողովրդական ճարտարապետութեան մէջ[19]։

Սակայն այս երեւոյթն ընդհանուր բնոյթ չունի եւ ուշ միջնադարի շատ յուշարձանների վրայ չի տարածւում։ Կրօնական համալիրների առանձին կառուցուածքների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ կիրառուել են երկարութեան տարբեր չափեր՝ մոդուլներ թէ՛ շէնքի ընդհանուր յօրինուածքում եւ թէ՛ նրա առանձին մասերում։ Օրինակ, Մեծ Անապատի բազիլիկի յատակագիծը (ինչպէս եւ բարձրութեան որոշ չափեր) ստեղծուած է միաւոր ընդունելով 61 սմ. երկարութեան մոդուլը։ Նոյն անա-

պատի միարանութեան խցերի յատակագծային–ծաւալային ողջ յօրինուածքի համար ընդունուած է մոդուլ՝ հաւասար 71 սմ.։ Շնհէրի Կուսանաց Անապատի սեղանատունը կառուցուած է 63 սմ. մոդուլի հիման վրայ։ Այս առումով հետաքրքրական է Մեղրու գմբէթաւոր բազիլիկի յատակագծի վերլուծութիւնը։ Այստեղ մոդուլը հաւասար է 61 սմ.ի եւ կազմում է գմբէթի տրամագծի մէկ տասներորդ մասը։ Շէնքի լայնութեան սկզբնական չափը եղել է 22 մոդուլ։ Իսկ եկեղեցու երկարութեան չափը որոշելիս սխալ է տեղի ունեցել՝ հարաւային պատը նշահարման ընթացքում մէկ մոդուլ պակաս են վերցրել, քան հիւսիսայինը. եթէ վերջինիս երկարութիւնը հաւասար է 40 մոդուլի՝ ապա հարաւայինն ուղիղ 39 մոդուլ է։ Շէնքը եզրագծով ստացուել է անկանոն ուղղանկիւն. սա աւելի պարզ երեւում է չափագրութիւնից յետոյ։ Այս սխալը մէկ անգամ եւս ապացուցում է, որ ուշ միջնադարում հիմնականում շէնքի արտաքին չափերն են վերցրել մոդուլներով, ընդ որում ամբողջական թուերով արտայայտուած։

Վերը բերուած օրինակներում հանդիպեցինք երկարութեան միաւորի տարբեր մեծութիւնների՝ 61 սմ., 63 սմ., 71 սմ.։ Հանդիպում են նաեւ այլ միաւորներ՝ 80 սմ., մօտ մէկ մեթր։ Չափերի այս բազմազանութիւնն արդիւնք էր Հայաստանի տարբեր գաւառներում ընդունուած միաւորների եւ առանձին ճարտարապետերի կամ շին արարական խմբերի նախասիրութեանը։ Վերջիններս ունեցել են սեփական նախընտրած չափը, որով եւ առաջնորդուել են այս կամ այն յուշարձանի կառուցման ժամանակ։ Իսկ ինչպէ՞ս են առաջացել վերը նշուած չափի միաւորները եւ ի՞նչ ֆիզիքական հիմք ունեն նրանք։ 112 սմ.ը պարզ է՝ դա պաշտօնական ընդունուած չափն է՝ պարսկական գազը։ Իսկ միւս չափերի ընտրութեան ժամանակ որոշիչ դեր են խաղացել մարդու (ամէն որոշակի դէպքում՝ տուեալ ճարտարապետի կամ վարպետի) կազմուածքի համաչափութիւնները։ Չափումները ցոյց են տալիս, որ մարդու 170 սմ. հասակի դէպքում (այսպիսի միջին հասակ յատուկ է եւ հայերին) ստացւում է չափի միաւորի հետեւեալ ընորոշ մեծութիւնները.

100–102 սմ. — կողք ուղղուած ձախ ձեռքի միջամատի ծայրից մինչեւ կրծքի մէջտեղը.

80–82 սմ. — կողք ուղղուած եւ բռունցք կազմած ձախ ձեռքի ծայրից մինչեւ կրծքի մէջտեղը.

70–72 սմ. — կողք ուղղուած ձախ ձեռքի ուսից մինչեւ միջնամատի ծայրը.

60–62 սմ. — կողք ուղղուած եւ բռունցք կազմած ձախ ձեռքի ծայրից մինչեւ նոյն ձեռքի ուսը։ Այս միաւորը կիրառելու համար աւելի յարմար է, որովհետեւ չափողը կարող է ձախ ձեռքով բռնել թելի ծայրը, իսկ աջով

այն ձգել մինչեւ ուսը։

Պարսկական գազի չափը՝ 112 սմ., նոյնպէս ելնում է մարդուց՝ այն հաւասար է աջ ուսից մինչեւ մի կողմ պարզած ձախ ձեռքի միջամատի ծայրը եղած հեռաւորութեանը։

Այս չափերը տարածուած են եղել եւ այլ երկրներում։ Միջնադարում Միջին Ասիայում կիրառուել է 60–62 սմ. երկարութեամբ գազ։ Նոյն միջինասիական խանութիւններում մինչեւ ԺԶ. դար օգտագործուել է նաեւ այսպէս կոչուած, «Թիմուրի գազը», հաւասար՝ 70–72 սմ-ի։ 71 սմ-ի է հաւասար նաեւ մէկ արշինը։

Շինարարական գործում մոդուլների կիրառումը (թէկուզ եւ տարբեր չափերի) զգալի օգնում էր ճարտարապետերին ու վարպետներին մտայղացումը տեղում իրականացնելու եւ շէնքի ամբողջ յօրինուածքի եւ նրա մասերի ներդաշնակ համակարգութիւններ ստանալու համար։

Հայաստանում շինարարական գործում օգտագործուել է արաբական չափի միաւոր «հալաբին» (հալէպեան), որով չափել են շէնքերը եւ գետնի վրայ նշահարել շինութիւնների յատակագծերը[20]։ Հալաբին հաւասար էր 0.8 մ-ի, եւ նրանով նոյնպէս չափերը վերցրել են ամբողջական թուերով[21]։

Ճարտարապետի՝ «մեծ ուստայի» ղեկավարութեամբ աշխատող խմբում եղել են տարբեր մասնագիտութեան վարպետներ՝ Ցովհաննավանքի նորոգման ժամանակ «Ժողովեաց բազում վարպետս՝ քարահատ եւ փայտատաշ, եւ դարբին», ընդ որում մեծամասնութիւն են կազմել քարտաշ բանուորները՝ «երեսուն քարտաշ հանապազ նստեալ քար տաշէին, եւ երկու ճարտար մէմար միշտ չարէին»[22]։ Որմնադիր ճարտարապետի եւ քարտաշ վարպետների թուի յարաբերութիւնը կախուած աշխատանքների ծաւալից եւ ժամանակի սղութիւնից՝ տարբեր են լինում. Ագուլիսի Ս. Քրիստափոր Եկեղեցու կառուցման ժամանակ այն եղել է 30, իսկ յաջորդ տարում 40 վարպետ, «Մեծ ուստայի» ղեկավարութեամբ աշխատող[23]։

Կառուցուող շէնքի բնոյթից կախուած՝ տարբեր էին աշխատող վարպետների մասնագիտական կազմը՝ աղիւսի կիրառման ժամանակ մասնակցում են աղիւսագործները, քարային աշխատանքների աւարտից յետոյ՝ ծեփողները։ Վարպետներից բացի կային նաեւ սեւագործ բանուորներ (հողային, օժանդակ աշխատանքների, շինանիւթ բերելու, շաղախ պատրաստելու համար), որոնք կոչւում էին «մշակ»[24]։

Կրօնական կենտրոններում շինարարութեան մասնակցում էին նաեւ հոգեւորականները՝ դպիրները, աբեղաները եւ աշակերտները, որոնք օժանդակում էին վարձուած աշխարհական բանուորներին՝ «մշակներին»։ Վարձւում էին նաեւ «տնտեսները», որոնց պարտականութիւնն էր կերակրել շինարարութեան վրայ աշխատողներին. Ս. Թովմայի Վանքի վերակա-

ռուցման ժամանակ ութ երիտասարդ հոգեւորականի հետ միասին աշխատում էին «եւ զդասս աշխարհականացն, որ վարձկան եղեն», ընդամէնը եօթ հոգի, որոնց թւում «եւ զՄիքայէլ տնտեսն, զոր այսքան շինութեան հացսն եփեցին»[26]։

Շինարարութեան կազմակերպման գործում կարեւոր էին շինանիւթի հայթայթումը եւ ժամանակին մատակարարումը։ Այդ պարտականութիւնը դրուած էր համայնքի (եթէ կառուցումը բնակավայրում էր կատարւում), կամ վանքի ու անապատի միաբանութեան վրայ, որի մասին նոյնիսկ որոշակի նշւում էր շինարարական արձանագրութիւններում[27]։ Կիրառւում էր տեղական շինանիւթը՝ տուֆը կամ պազալտը, որը հանւում էր կառոյցի մօտ գտնուող արդէն գործող կամ նոր բացուած քարհանքերից։ Աղիւս պատրաստելու համար եւս օգտագործւում էր շրջակայքի կաւը՝ Ագուլիսի Մ. Քրիստափոր եկեղեցու շինարարութեան համար «վանքի հողէն քարփիչ երեցին»[27]։

Սակայն մի շարք դէպքերում շինանիւթը բերւում էր հեռուից, որը տեղանքի կտրտուածութեան ու բանուկ ճանապարհների բացակայութեան դէպքում կապուած էր մեծ դժուարութիւնների ու բարդութիւնների հետ։ Միաժամանակ այդ երկարացնում էր շինարարութեան տեւողութիւնը եւ այն թանկացնում։ Ստեփանոս Նախավկայ Վանքի կառուցումը «...բազում աշխատութեամբ եւ յոլով ծախիւք յամս տասն ապա կատարեցաւ զի քարն եւ զկղմինդրն ի գեղջէն Աստապատայ բերէին տփով զերեսօքջուրց Երասխ գետոյն եւ մասն ինչ է քարանցն յԱրարգ գէղէն բերին ձիով. սոյնպէս եւ զկիրն եւ զփայտն եւ զհացն ի հեռու վայրաց բերէին մեծաւ աշխատութեամբ...[28]»։ Գետի միւս ափից ձիով բերուեցին քարը եւ կիրը Յովհաննավանքի վերանորոգման ժամանակ[29]։

ԺԷ. դարում նոր եկեղեցիներ կառուցելիս կամ հները հիմնովին վերակառուցելիս՝ շարուածքում օգտագործում էին խաչքարեր եւ տապանաքարեր։ Այդ վերաբերում է յատկապէս ծխական եկեղեցիներին, որոնց շուրջը յաճախ տարածւում էր բնակավայրի գերեզմանոցը։ Սակայն տապանաքարերի որպէս շինաքար կիրառելիս ակնյայտ առկայ է անարդար մօտեցումը։ Զաքարիա Ագուլեցին այդ մասին որոշակի նշում է Ս. Յովհաննէսի վերակառուցման ժամանակ՝ «գերեզմանատունն էլ վարթարաւ արարին. ոմն նշանաւոր մեռել կէր, զայն թողին, ապայ անտէրն, աննշան մեռելն քարն վեր կալան, ոմն դրին եկեղեցու պատն, ոմն ձգեցին եկեղեցու դռներն»[30]։ Այս է պատճառը, որ ԺԷ. դարում եկեղեցիների պատերին դրուած հանդիպում են ոչ միայն մինչեւ ԺԶ. դար թուագրուող տապանաքարեր՝ այլ նոյնիսկ ԺԷ. դարի սկզբի գերեզմանաքարեր։

Վիմագրերի եւ պատմական աղբիւրների առանձին տեղեկութիւններից հնարաւոր է պատկերացում կազմել շինարարական գործի մի կարեւոր

հարցի՝ վարձատրման դրուածքի մասին։ Միջնադարեան Հայաստանում շինարարների աշխատանքի վարձատրման երեք եղանակ գոյութիւն ունէր՝ միանուագ (ճարտարապետերի համար), գործարքային (քարտաշների համար) եւ օրավարձ (սեւագործ բանուորների համար)։

Ուշ միջնադարում վճարի հիմնական ձեւը միանուագն էր, որովհետեւ ճարտարապետերը եւ քարտաշ վարպետները աշխատում էին համատեղ մէկ խմբում եւ վարձատրւում էին միասին, շինարարական եղանակի աւարտին։ Սրանով է պայմանաւորուած այդ ժամանակաշրջանում պատերի տաշուած քարերի վրայ վարպետների նշանների բացակայութիւնը, որի հիման վրայ միջնադարում կատարւում էր իւրաքանչիւր քարտաշ բանուորի վարձատրութիւնը[31]։

Ուշ միջնադարում օրավարձով աշխատում էին «մշակները», իսկ գործարքային վարձատրւում էին քանդակագործները, դարբինները, ատաղձագործները։ Զրի էին աշխատում ծխական եկեղեցիներ կառուցելիս գիւղացիները, իսկ վանքերում՝ միաբանութեան անդամները։

Շինարարական աշխատանքները կատարւում էին գարնանից մինչեւ աշուն, ընդհատուելով ձմրանը։ Աշնանը ճարտարապետը եւ իր խումբը միանուագ ստանում էին այդ տարուայ կատարուած աշխատանքի վարձը, որը կոչւում էր «ամառային վճար»[32]։ Բնակելի շէնքերը կառուցւում էին մէկ եղանակի ընթացքում։ Զաքարիա Ագուլեցին իր երկու–երեք յարկանի տունը կառուցեց 1670 թուի Ապրիլի 20ից մինչեւ Նոյեմբեր 1ը՝ ծախսելով «թէ ուստի, թէ արկաթէղենի, թէ փայտի, թէ դուրգարի ու թէ գաջի, թէ քարի համար 65 թուման»[33]։ Թէ ո՞րքան էին ստանում ճարտարապետերը եւ վարպետները առանձին՝ յայտնի չէ։ Արձանագրութիւններում եւ պատմիչների մօտ նշւում է միայն ընդհանուր գումարը։ Ցղնայի Ս. Աստուածածին գմբէթաւոր բազիլիկի կառուցման համար վճարուել է 12 լիտր ոսկի (60 կգ)[34], Փիլիպոս կաթողիկոսը էջմիածնի վանքի նորոգութիւնների ժամանակ միայն փայտէ աշխատանքների համար «ռ(1000) ղուռուչ նաղտ դրամ նորին արհեստաւորացն ետ»[35]։

Շինարարութեան ֆինանսաւորման լրացուցիչ աղբիւր էր դեռ անաւարտ եկեղեցու պատերին խաչեր փորագրելու իրաւունքի համար որոշ գումար վճարելը։ Ագուլիսի Ս. Քրիստափոր Եկեղեցու «գ(3) ուրմին իե (25) խաչ, ոմն պատկեր վասն յիշատակի գրեցին... Ամէն խաչի, թէ պատկերի մէկ մէկ թուման տուին եկեղեցուն»[36]։

Եկեղեցիների կառուցման տեւողութիւնը տարբեր է՝ Ագուլիսի Ս. Քրիստափոր գմբէթաւոր բազիլիկինը հինգ տարի է, Տաթեւի Մեծ Անապատի եռանաւ բազիլիկինը՝ մօտ վեց տարի, Հերհերի Ս. Գրիգոր Եկեղեցինը՝ ինը տարի, Նորաշէնիկի Աստուածածին բազիլիկինը՝ 13 տարի։ Բայց ժէ. դարում աշխատանքների մասնագիտացումը թոյլ է տուել զգալի կըր-

ճատել շինարարութեան տեւողութիւնը։ Այսպէս՝ Ագուլիսի Ս. Յովհաննէս եկեղեցին կառուցուել է 1664 թուի Յուլիսի 5ից մինչեւ Նոյեմբերի 5ը՝ 16 ամսուայ ընթացքում[37]։ Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսաւորիչ միանաւ եկեղեցու շինարարութիւնն աւելի կարճ է տեւել՝ 1670 թուի սկզբից մինչեւ Սեպտեմբերի 20ը՝ մօտ 9 ամիս[38]։ Ուշ միջնադարի միանաւ դահլիճները եւ եռանաւ բազիլիկների մեծ մասը կառուցուել են մէկ տարում։ Շնհէրի Կուսանաց Անապատի բազիլիկը, ըստ շինարարական արձանագրութեան, ըսկսել են կառուցել 1676 թուի Ապրիլի 4ին եւ աւարտել նոյն թուի Սեպտեմբերի 30ին. շինարարութիւնը տեւել է վեց ամսից էլ քիչ, ընդամէնը 178 օր։ Այսպիսի կարճ ժամկէտ չի հանդիպում ոչ մի ուրիշ եկեղեցական շէնքում։

Չնայած այսպիսի սեղմ ժամկէտերին՝ ուշ միջնադարում եկեղեցիները կառուցւում էին մեծ խնամքով եւ բարձր որակով, որի շնորհիւ նրանց մեծ մասը դիմանալով վերջին երեքհարիւրամեակի բնական արհաւիրքներին՝ կանգուն ու առանց էական նորոգումների հասել է մեզ։ Միայն մէկ դէպք է յայտնի, երբ թուրք–պարսկական պատերազմի ժամանակ՝ 1630 թուին աղիւսով եւ փայտով ու ըստ երեւոյթին անորակ եւ հապճէպ կառուցուած Ագուլիսի Ս. Քրիստափոր Եկեղեցին ընդամէնը քառասուն տարի անց ինքն իրեն փլուեց («Բ. թագաւորաց կռիւ էր Երեւանայ բերդին վրայ, վասն այն՝ կէսն երած քարփիչով, կէսն փայտով շինեցին. վասն ահիւ մին տարով շինեցին...»)[39]։ Եկեղեցին կառուցուեց նորից, հինգ շինարարական եղանակի ընթացքում, Վասպուրականից հրաւիրուած ճարտարապետերի ու վարպետների ուժերով, քարի ու աղիւսի կոնստրուկցիաները առանձին շինարարական խմբերի ուժերով շինելով։ Այս եկեղեցու կառուցման օրինակով, որը մանրամասն նկարագրել է Զաքարիա Ագուլեցին, կարելի է լրիւ պատկերացում կազմել ուշ միջնադարում շինարարական աշխատանքների կազմակերպման գործի վերաբերեալ։ Առաջին տարում հիմնովին քանդել են նոյն տեղում եղած հին եկեղեցին եւ նորի հիմքերը շինել ...«մինչի եհաս հողի հաւասար»։ Երկրորդ տարում 30 վարպետից կազմուած խումբը բարձրացրել է պատերը (սրբատաշ քարից), մինչեւ... «դռների գլուխը»։ Ընդ որում շինարարական աշխատանքները կատարուել են գարնանից մինչեւ աշուն (Նոյեմբեր), ամբողջովին դադարեցուելով ձմեռուայ ամիսներին (երեք ամիս)։

Երրորդ տարում խումբը կազմուած է եղել արդէն 40 հոգուց, որոնք Մարտի 20ից Նոյեմբերի 1ը բարձրացրել են պատերը մինչեւ ծածկի թաղերը։ Վարձատրութիւնը եղել է ըստ առանձին աշխատանքների՝ պատերը հիմքից մինչեւ թաղերը կառուցող խումբը միանուագ ստացել է իր հասանելիք գումարը աշխատանքները վերջացնելուց յետոյ։ Չորրորդ տարում աշխատել է նոր խումբ՝ 18 հոգուց կազմուած, որը կառուցել է թաղերը եւ կամարները (տախտակամածների օգնութեամբ)։

Քարային աշխատանքները վերջանալուց յետոյ՝ շինարարութեան վերջին, հինգերորդ տարում, կառուցուել են շէնքի աղիւսէ մասերը։ Եկեղեցու գմբէթն իրականացուած է աղիւսից, որն, ինչպէս տեսանք, բնորոշ է Գողթն, Երնջակ, Արեւիկ գաւառների համար։ Աշխատանքի մասնագիտացումն աւելի ցայտուն երեւում է այս դէպքում. աղիւսի պատրաստման համար հրաւիրել են տեղացի վարպետներ, որոնք եկեղեցու կողքին աղիւսի թրծման վառարան են շինել։ Աղիւսէ ծածքը կառուցել են ջուղայեցի երկու վարպետ, իսկ գմբէթի համար նորից հրաւիրել են Վասպուրականի վարպետներին, մոկսեցի ճարտարապետի ղեկավարութեամբ։ Պէտք է նշել, որ այս եկեղեցին կանգուն եւ անփոփոխ հասել է մեր օրերը։

Կառուցումն աւարտելուց յետոյ եկեղեցիները օծւում էին եւ անուանակոչւում։ Այս կապակցութեամբ հետաքրքրական է դիտարկել ուշ միջնադարում եկեղեցիների անուանակոչութեան հարցը, թէ գերադասութիւնը ո՞ր սրբին էր տրւում եւ ապա, դարերի ընթացքում, այն ի՞նչ փոփոխութիւն է կրել։ Հայաստանի վաղ միջնադարի եկեղեցիների անուններից քչերն են նշուել շինարարական արձանագրութիւններում եւ պատմիչների մօտ։ Ժամանակի ընթացքում, վերաբնակեցումների ու գաղթերի պատճառով, հնագոյն եկեղեցիների մի մասը նոր անուն է ստացել։ Հաւաստի փաստական նիւթից յայտնի է դառնում, որ վաղ միջնադարում եկեղեցիների մեծ մասը կոչուել է Աստուածածնի անունով, երկու անգամ պակաս՝ Ս. Գէորգի, ապա Ս. Ստեփանոսի, Ս. Յովհաննէսի եւ Գրիգոր Լուսաւորչի անուններով։

Թ.—ԺԴ. դարերում եկեղեցիների անունները նշուած են վիմագրերում եւ գրական աղբիւրներում։ Այս դարերում եւս եկեղեցիների մեծ մասը (մօտ մէկ երրորդը), նուիրուած են Աստուածածնին, երկուս եւ կէս անգամ պակաս՝ Գրիգոր Լուսաւորչին, ապա Ս. Յովհաննէսին, Ս. Խաչին, Ս. Գէորգին եւ Ս. Ստեփանոսին։

Ուշ միջնադարում նոյնպէս եկեղեցիների մօտ մէկ երրորդը նուիրուած էր Աստուածածնին։ Երեք անգամ քիչ է տարածուածութեամբ երկրորդ՝ Ս. Ստեփանոս (նաեւ Ս. Ստեփանու Նախավկայ) անունը։ Յաջորդաբար գալիս են Ս. Յովհաննէս (Ս. Յովհաննէս Կարապետ, Յովհաննէս Մկրտիչ), Ս. Գէորգ, Ս. Յակոբ (Ս. Յակոբ Հայրապետ), Ս. Գրիգոր (Ս. Գրիգոր Լուսաւորիչ) անունները։ ԺԵ.—ԺԸ. դարերում եկեղեցիները կոչուել են մօտ 30 անունով, որոնց թւում են Ամենափրկիչ, Ս. Խաչ եւ Ս. Նշան, Ս. Հռիփսիմէ, Ս. Սարգիս, Թարգմանչաց, Ս. Մինաս, սակաւաթիւ՝ Ս. Յարութիւն, Ս. Թովմաս, Ս. Պետրոս, Ս. Պօղոս—Պետրոս, Ս. Սիոն, Երրորդութիւն, Ս. Շմաւոն, Ս. Գաբրիէլ (կամ Հրեշտակապետաց), Ս. Վարդան, Ս. Եղիշէ, մէկական անգամ՝ Ս. Թադէոս, Ս. Պօղոս, Ս. Գրիգորիս, Ս. Քրիստափոր, Շողակաթ, Հիզտրուզիտ[*]։

Եկեղեցիները, որպէս կանոն, նուիրուած են մէկ սրբութեան։ Աչքի է զարնում վաղ միջնադարից մինչեւ ԺԸ. դար Հայաստանում Աստուածածնին նուիրուած եկեղեցիների քանակի զգալի գերակշռութիւնը։ Առաջինը քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունած երկրում Աստուածամօր այսպիսի համընդհանուր եւ արտակարգ տարածուած պաշտամունքը միջնադարում բացառիկ երեւոյթ էր քրիստոնէական աշխարհում եւ Հայ Առաքելական Եկեղեցու առանձնայատկութիւններից մէկն է։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ*, Վաղարշապատ, 1896, էջ 277: Այսուհետեւ՝ Դաւրիժեցի:
2. Նոյն:
3. Նոյն, էջ 233:
4. *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, Երեւան, 1938, էջ 63: Այսուհետեւ՝ Ագուլեցի:
5. *Դիւան Հայ Վիմագրութեան*, պրակ 2, *Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի Շրջանները*, Ս. Բարխուդարեան, Երեւան, 1960, էջ 11–54:
6. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 212:
7. Ս. Սաղումեան, «Մուղնու Ս. Գէորգ Եկեղեցին եւ նրա վիմագրերը» *Էջմիածին*, 1977, թիւ 1, էջ 52: Այսուհետեւ՝ Սաղումեան:
8. Ագուլեցի, էջ 84:
9. Ե. Լալայեան, *Գանձակի Գաւառ*, Թիֆլիս, 1901, էջ 103, 105, 108:
10. Դաւրիժեցի, էջ 267:
11. Ագուլեցի, էջ 82:
12. Կ. Ղաֆադարեան, *Միջնադարեան Յուշարձանները եւ Վիմական Արձանագրութիւնները*, Երեւան, 1975, էջ 166:
13. Ագուլեցի, էջ 96:
14. Ս. Բարխուդարեան, *Միջնադարեան Հայ Ճարտարապետներ եւ Քարգործ Վարպետներ*, Երեւան, 1963, էջ 106, 111, 113, 115:
15. Սաղումեան, էջ 30:
16. *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ* (1621–1640թթ.), հտ. Բ., Երեւան, 1978, էջ 742: Այսուհետեւ՝ *Հայերէն Ձեռագրեր*, Բ.:
17. Ագուլեցի, էջ 63:
18. Դաւրիժեցի, էջ 253:
19. Ագուլեցի, էջ 90:
20. Դաւրիժեցի, էջ 253:
21. Նոյն, էջ 254:
22. Նոյն, էջ 282:
23. Ագուլեցի, էջ 96:
24. *Հայերէն Ձեռագրեր*, Բ., էջ 743:
25. Նոյն:
26. *Դիւան Հայ Վիմագրութեան*, պրակ 5, *Արցախ*, Ս. Բարխուդարեան, Երեւան, 1973, էջ 166:
27. Ագուլեցի, էջ 97:

28. Դաւրիժեցի, էջ 281:
29. Նոյն, էջ 282:
30. Ագուլեցի, էջ 130:
31. Ս. Մնացականեան, «Միջնադարեան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը, եւ վարպետների նշանները», ***Պատմա-Բանասիրական Հանդէս***, թիւ 3, 1958:
32. Ս. Սաղումեան, «Ե՞րբ եւ ովքե՞ր են կառուցել Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատունը», ***Էջմիածին***, թիւ 5, 1976, էջ 30:
33. Ագուլեցի, էջ 90–91:
34. Ե. Լալայեան, ***Գողթն***, Թիֆլիս, 1912, էջ 82:
35. Դաւրիժեցի, էջ 261:
36. Ագուլեցի, էջ 86:
37. Նոյն, էջ 63–65:
38. Նոյն, էջ 82:
39. Նոյն, էջ 96–97:

Մ.Հ.

THE PLANIFICATION OF THE CONSTRUCTION WORK IN ARMENIA IN THE LATE MIDDLE AGES

(Summary)

MOURAD HASRATIAN

With the help of certain historical data, colophons of Armenian manuscripts, mural inscriptions and archival givens, it is now possible to clarify the construction process in the late Middle Ages in Armenia. In the XV-XVIII centuries church construction was financed by different sources, such as the Catholicossate, monasteries, and popular contributions. It was at this time that there emerged a new class of patrons; the merchants, who financially helped the erection of new churches and monasteries, renovated the cells and various quarters in both the old churches and monasteries, dug water channels, constructed brigdes, etc. Those who took the initiative, organized and directed the construction work appointed superintendents, who were either chosen from the community members or from the congregation of a given monastery. These were wholly responsible for the progress of the work, the right spending of financial means, and inviting the masons, who in those days moved from one construction site to the other. The masons from Vaspourakan (the region of modern Van) were appreciated most.

Real information and data lack on the existence of architectural schemes, designs and drawings, but the fact that they existed in Russia and the Middle East in the XVI century, and that the Persian emperor ordered in 1664 to write down in registers the measurements of all the Armenian churches at least in his empire, make us believe that there undoubtedly existed architectural planification and designing in Medieval Armenia. Later information tell that the construction plans were first put down and marked on the ground and only then the construction work began. In doing this the Persian *gaz*, a measurement unit of 1.12 m., was used.

Payment was done in three different ways: a. in lump form (to the architect and master masons); b. according to the amount of the work achieved (to the blacksmiths, carpenters, etc.); and c. in the form of daily wages (to the sundry labourers).